ՎԱԽՃԱՆՎԵՑ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՂԱՆՃՅԱՆԸ

Նորին Սուրբ Օծութիւն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհուրդը խոր վշտով իմացան տխուր լուրը Կ. Պոլսո Պատրիարք Գարեգին Արք. Գաղանճյանի մահվան, որ տեղի է ունեցել մարտի 10-ի առավոտյան 2-ին Ստամբուլի Սբ. Ամենափրկիչ հայկական հիվանդանոցում:

Վեհափառ Հայրապետը անմիջապես իր ցավակցական դիրն ուղղեց Կ. Պոլսո Պատրիարքության լիազոր ընդհանուր փոխանորդ գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի միջոցով, որտեղ մասնավորապես ասվում է.

«Սիրելի Սրբազան,

Սիրեցեալ հոգեւորականներ՝ անդամք կրօնական ժողովոյ եւ թանկագին հաւատացեալներ,

Սրտի խոր կսկիծով քիչ առաջ Ձեր հեռաձայնային խօսակցութեամբ իմացանք կանխահաս վախճանումը Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գաղանճեանի:

Առաւօտ կանուխ ժամերգութեան աւարտին Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Մայր Աթոռի միաբանութեան անդամներուն հետ միասին աղօթք էինք մատուցեր առ բարեգութն Աստուած իր առողջութեան համար: Այժմ կ'աղօթենք իր հոգւոյ խաղաղութեան համար:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի, եկեղեցական դասուն, համայնքային աշխարհական մարմիններուն եւ հաւատացեալ ժողովուրդին պարգեւէ Ս. Հոգւոյ մխիթարութիւնը: Թող Ամենակալ Աստուած ամուր եւ բարգաւաճ պահէ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքական Աթոռը հոգեւոր-կրօնական, քրիստոնէական-դաստիարակչական եւ խնամատարական իր առաքելութեանը մէջ ի վայելումն Թուրքիոյ հայ ժողովրդեան:

Մօտ ատենէն Ձեզի կ'ուղարկենք անունները Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պատգամաւորութեան անդամներուն, որոնք Մեզ եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը պիտի ներկայացնեն հանգուցեալ Պատրիարքի թաղման արարողութեանց:

Ողջ լերուք ի Տէր զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ»: